ՀԱՅԱՍՏԱՆ

Նոյեմբերի 14, 2023

Առանցքային տվյալներ.

101,848
փախստական է եկել Հայաստան

ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված ոչ պարենային ապրանքներ (ՈՊԱ)

- 11,356 անկողնային սպիտակեղեն
- 10,741 ծածկոց
- 10,706 բարձ
- 4,399 ներքնակ
- 3,755 ծալովի մահճակալ
- 1,399 խոհանոցային հավաքածու
- 3,419 հիգիենայի հավաքածու

Ֆինանսավորում.

14.6 մլն ԱՄՆ դոլար
է պահանջվում 2023- 2024 թթ., այդ թվում՝ արտակարգ իրավիճակին արձագանքելու համար

Ֆինանսավորված՝ 49%

Պակասող ֆինանսավորում՝ 51%

7.2 մլն ԱՄՆ դոլար
է ստացվել առ 2023 թ. նոյեմբեր 14-ը

Իրավիճակի վերաբերյալ թարմ տվյալներ

2023 թ. նոյեմբերի 9-ին ՀՀ կառավարությունը հաստատեց Հայաստանում ապաստան գտած փախստականների համար նախատեսված հերթական ֆինանսական աջակցության ծրագիրը: Օգտվելու իրավունք ունեցող փախստականները նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին առաջին անհրաժեշտության կարիքների բավարարման համար կստանան 50,000-ական դրամ (մոտ 124 ԱՄՆ դոլար) կստանան: Հյուրանոցներում կամ հյուրատներում ժամանակավոր բնակվող, արտերկրում գտնվող, կամ բանկային հաշիվների վրա 2 միլիոն դրամից (մոտ 5,000 ԱՄՆ դոլար) ավելի գումար ունեցողները չեն կարող օգտվել այս ծրագրից:

ՄԱԿ ՓԳՀ արձագանքումն արտակարգ իրավիճակին

Փախստականների պաշտպանություն

- 2023 թ. նոյեմբերի 13-ին ՄԱԿ ՓԳՀ-ն հրապարակեց Կարիքների արագ գնահատման (ԿԱԳ) արդյունքները, որն այս տարվա հոկտեմբերի 9-13-ի ընթացքում իրականացվել էր 89 առանցքային տեղեկատուների շրջանում: Առաջարկությունները ներառում են պարենային անվտանգության, կրթության, կացարանի, ոչ պարենային ապրանքների, փախստականների պաշտպանության, առողջապահական եւ դիմակայունության միջամտությունների ամրապնդմանը: Գնահատումն իրականացվել է երկրի 10 մարզերի 29 համայնքներում, ներառյալ Երեւանում, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) համագործակցությամբ, ինչպես նաեւ այլ ճյուղային նախարարությունների, ՄԱԿ գործընկերությունների, քաղհասարակության կազմակերպությունների, Համաշխարհային բանկի, տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ:

ՄԱԿ ՓԳՀ-ն Արագածոտնի մարզի ժամանակավոր կացարանում բնակվող փախստական կանանց խմբի հետ պաշտպանության մշտադիտարկում է անցկացնում: ©UNHCR

- 2023 թ. նոյեմբերի 1-ից սկսած՝ ՄԱԿ ՓԳՀ-ն պաշտպանության մշտադիտարկում է անցկացրել **109 ընտանիքների** (516 փախստականների) շրջանում:
- Այս տարվա հոկտեմբերի 1-ից ի վեր՝ ԼՂ **փախստականներից ավելի քան 1,740 հեռախոսազանգ** է ստացվել ՄԱԿ ՓԳՀ թեժ գծին: Առավել հաճախ նրանք հաղորդել են կացարանի (37%), սննդամթերքի (24%), անկողնային պարագաների (15%) եւ կենցաղային իրերի (12%) կարիքների մասին:

Ապաստան եւ ոչ պարենային ապրանքներ (ՈՊԱ)

- 2023 թ. հոկտեմբերի 3-ից նոյեմբերի 14-ը ՄԱԿ ՓԳՀ-ն իր գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի միջոցով Երեւանում եւ տարբեր մարզերում բնակվող **3,419 ընտանիքի՝ 11,356 փախստականի 53,647** ՈՊԱ է տրամադրել:

Համակարգում

- Կամավորական գործակալությունների միջազգային խորհրդի (ԿԳՄԽ) հետ համատեղ կազմակերպված՝ ՀԿ-ների տարածաշրջանային երկխոսությանը մասնակցող եվրոպական ՀԿ-ներին ՄԱԿ ՓԳՀ-ն եւ իր գործընկերները ներկայացրել են Փախստականների կարիքներին արձագանքման ծրագրի ընթացքը եւ դրա հետ կապված ընդհանուր աշխատանքները:
- ՄԱԿ ՓԳՀ-ն պաշտպանության ոլորտի բոլոր անդամների հետ խորհրդակցությամբ թարմացրել է Արտակարգ իրավիճակներում պաշտպանության եւ կայուն լուծումների ռազմավարությունը: ԳՀԲ ենթաոլորտը քննարկել է գործընկերների կարողությունների ձեւավորման կարիքների, աջակցության քարտեզագրման հարցերը եւ տեղեկացրել, որ 30,000 կանայք եւ աղջիկներ արդեն օգտվել են գործընկերների տրամադրած աջակցությունից ու ծառայություններից: Սեռական շահագործումից եւ չարաշահումից (ՍՇՉ) պաշտպանելու նպատակով կստեղծվի ՄԱԿ ՀԹ ՍՇՉ թեժ գիծ, որի աշխատանքը կապահովեն ՄԱԿ ՓԳՀ-ն եւ ՊՀԾ-ն, ինչպես նաեւ կտրամադրվեն իրազեկության բարձրացմանն ուղղված նյութեր եւ կապի հաստատման տվյալներ:

- ՄԱԿ ՓԳՀ-ն հրապարակեց Միջգործակալական արձագանքման թիվ 5 թողարկումը, որտեղ նկարագրված են հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 7-ի՝ արտակարգ իրավիճակին արձագանքման առանցքային զարգացումները :

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է դոնոր կառույցներին աջակցության համար. Ավստրալիա | Բելգիա | Կանադա | CERF| Դանիա | Ֆրանսիա | Գերմանիա | Իռլանդիա | Ճապոնիա | Նիդեռլանդներ | Նորվեգիա | Լեհաստան| Շվեդիա | Շվեյցարիա| Միացյալ Թագավորություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մանրամասն տեղեկությունների համար կապ հաստատել. UNHCR Armenia, armye@unhcr.org, www.unhcr.org